

ՆՈՐ ՀՐԱՆՑՈՅՑ ԳՈՐԾԻ

Հրդեհը՝ աշխարհիս ահաւոր աղետից ահաւորագոյնը, բազում տնգամ պատերազմաց հետեանք մ'է. և այս առթիւս մէջ կամաւ կը գործածէ զայն մարդկային չարութիւնը իբրեւ միջոց վրէժխնդրութեան: Բայց կը պատահի դարձեալ յոչ կամաց, յանհոգութենէ և 'ի տգիտութենէ մարդկան, որուն նշաւակ եղած է դժբախտաբար Արևելք, և առաւել քան զայլ կողմանս՝ մայրաքաղաքն Օսմանեան Պետութեան կոստանդնուպօլիս. և ասոր գլխաւոր պատճառն այն է որ տուներն փայտաշէն են, և կը պակասին նոյն աղետից առջին առնելու կարեւոր միջոցներն, այն է առատութիւն ջուրց և բազմութիւն ու կատարելութիւն հրանցոյց գործեաց և գործաւորաց: Սակայն բաց յԱրևելից՝ Եւրոպիոյ հիւսիսակողմերն ալ ստէպ կը պատահի հրդեհ, և փնասներն ալ մեծամեծք են, ինչու որ նոյն տեղեաց բնակիչքը ցրտային կլիմայի տակ ըլլալով, տուներնին փայտէ կը շինեն ու վրան ալ յարդով կը պատեն, և ներսը միշտ վառ կրակ կը պահեն, ուստի պղտի անզգուշութիւն մը շատ անգամ մեծամեծ աղետից պատճառ կ'ըլլայ նոյն ժողովրդոց:

Եւ որովհետեւ մեծ է հրդեհէն յառաջ եկած փնասները, անոր համար ուր որ տարածուեցաւ եւրոպական քաղաքակրթութիւնը, հասարակաց վարչութիւնը ջանաց միշտ նոյն փնասուց առջին առնելու համար զօրաւոր միջոցներ գործածել, պատուիրելով որ ըստ կարելոյն տուներն քարաշէն ըլլան, կրակի մօտ դիւրավառ նիւթեր չի դրուին, և շանթարդել գործեաց կիրառութիւնը տարածուի, և ուրիշ ասոնց նման դարմաններ: Այս կերպով հրդեհին առջին առնելու միջոցներն տակաւ Եւրոպիոյ մէջ տարածուեցան, և ամեն քաղաք ու ամեն գեղ, և կամ ըսեմ ամեն ընկերութիւն՝ հրանցոյց գործիներ և ջուր կրելու դոյլեր հայթայթեց իրեն: Ասոնցմէ զատ այս գոր-

ծոյս ծառայութեան համար մասնաւորապէս խումբ մը մարդկանց կարգեցին, և իւրաքանչիւր խմբին որոշեալ սահմաններ դժեցին, որպէս զի միշտ պատրաստ ըլլան եթէ վտանգ մը հանդիպի ծառայութիւն մատուցանելու:

Բայց իսկըզբան այս հրանցոյց գործիներն բնականաբար չունէին այն կատարելութիւնն զոր ունեցան ապագային մէջ: Այլ և այլ ժամանակ զանազան մեքենագործք միշտ աւելի կատարելագործեցին և դիւրացուցին անոնց գործածութիւնը, որով և արդիւնքն աւելի զգալի ըրին: Յայտնի է որ հրդեհ մը երբ նոր սկըսած է, բաւական է նուազ քանակով ջուրն ալ շիջուցանելու համար զայն, եթէ առ այն յարմարեալ գործի մ'ունենամք: Ուստի վերջերս Պոսդըն քաղաքէն հալլ անուն երկու եղբարք, նոր հրանցոյց գործի մը հնարեցին, զոր և ներկայացուցած եմք 'ի պատկերի, որուն գլխաւոր յատկութիւնն է, ինչպէս ըսինք, համեմատաբար քիչ քանակ ջրով շիջուցանել որ և է հրդեհ: Մեքենայն յինքեան այնպէս պղտի է, որ գործածելու համար կրնայ դրուիլ ստոլի և կամ ուրիշ դիւրամատոյց տեղ: Ա խողովակը այն տեղն կը գործածուի երբ առատ ջրոյ բնական ընթացք մ'ունենամք: Եթէ պակասի այս բնական ջրոյ ընթացքն՝ այն տեղն կը գործածուի B կաշիէ խողովակը, որ ջուր կը մատակարարէ D խողովակաց, և ասոնք ալ կը հաղորդեն ջուրը ուրիշ խողովակաց ձեռքով E ուղղութեամբ այն տեղը՝ ուր է հրդեհը: Այս վերջին խողովակները սկըսելով այն կէտէն ուսկից միացած են D խողովակաց հետ՝ ունին մէջերնին ամենաերկայն նուրբ ուրիշ խողովակներ, որոց մէջէն անցնելով ջուրը բարակ անձրևի պէս կը թափի կրակին վրայ և մէկէն կը շիջուցանէ զայն և չի թողուր որ տարածուի:

